մը զարկեց վեր աղջկան թևին, թև թեւլցաւ կախվաւ մօտէն։ Աղջիկը լալով դառձաւ մօտ խէր՝ եղելութեն պատմեց։

116. Թագաւոր առեց ուր կնիկը ու աղջիկն, գնացին Տաւթին տեղ։ Տանէն տիւրս լաւն, որ տաւիթ կը խնտրէ Աստծուց ուր խօղին առնելու, մտան մօտ։ Թագաւոր ասաց, իմ աղջկան ուրու տէր իր, Պարան Պաոշ, պարան Բէքք Փռընտայ[1] տէւ էլջի օղօրկէր ին կռիւ կուզին։ Տաւիթ թռաւ ձիու քեամակ, որ էրթէր ինոնք սպանէր։ Թագաւոր ասաց. «Պէտքէ որ առաջ ձե տանենք եկեղեցին վեր խրարու պսակենք, յորա էրթաս»։—Տաւիթ՝ չէ, ասաց, ես չուզմ ինոնք չսպանեմ քըոյ աղջիկ ձիկ խարամ էլնի։ Թագաւորն ասաց. «Ինոնք տէլ չէն իկե, ինոնց խեծել մենակ իկե տաշտ։ Տիւ տեաշ[2] խեծլի խետ պիտի կռվես, չուզմ ինոնք գեան։ Խեծել ջարդելէն յորա պիտի էրթաս Բարէկալ անուոր սարն, էնտեղ պօղպատէ սուր մը կայ, քըոյ թուր վեր ինոր պիտի փորձես. թէ որ կտրեց, գիտցիր որ պիտի յաղթես տեերուն»։

117. «Պարան Պաոշ, Պարան Բէքք Ֆռնտայ տէւեր կուգեան էն տեղ, քե կասեն էրթանք տաշտի մէջ կռվենք. տիւ չէ ասես, էս տեղ պիտի կռվենք»։ Կռվելու կերպն Թագաւորից ունելէն յորայ՝ Տաւիթ դառձաւ Խանտիւթ խանըմին ասաց. «Եօթն օր իմ ճամբախ կսպըես, թէ որ չեկայ, կուգեաս իմ լեշ կփտռտես, էն լեշերաց մէջ կնտնես, կխոըես. իմ նշանն էլ էս ի, որ թևիս տակը մաէ խաչ մը պիտի կնտնես»։

118. Տաւիթ քշեց Պարան Պաոշի խեծլի վերէն. ասաց.

«Օհնեալ բարերար Աստված,
Խնամք շատ էր մեծ Թագաւորուն։
Ով ինչ քինէք, արթուն մնացէք,
Ով ինչ արթուն էք, ձիանք թամքեցէք.
Զանէք, Տաւիթ գող էր, գողութնով էկաւ։

Խեծել ուր պատրաստութեն որ տէսաւ, Տաւիթ քեաշեց թուրն կեծակին, ասաց.

«Յիշեմ քե տերն կենդանին.
Մարութայ բանձր Աստուածածին,
Խաչն պատարագին, վեր աջն թևին»։

119. Ինկաւ մէջ խեծլին իրեք օր ըրդեց. ըռկում արնէ գետ էլաւ, որ սաղ մար տերն էլ կկլորէր կխեխտէր։ Իրեք մարտ մենակ ազատեց, ձեռը ոտ կապեց տրեց տարի մը գըլէօխ, որ Խանդիւթ խանըմին մշակ տանի։ Էն տեղէն գնաց Բարէկալ անուոր սարն, տէսաւ պօղատէ սուն, որ խաղարաւորներ իկեր ին, չին կարցե կտրել. քաշեց թուրն կեծակին, յիշեց ուր Տէրն կենդանին,

---

[1] Թեւաւոր, Թռուցիկ։ [2] Նախ. առաջ։